ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ՆՈՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Մարդկության դեմ գործած հանցագործությունների՝ պատերազմի և ցեղասպանության կանխարգելելն ու պատժելը համայն մարդկության, առաջին հերթին՝ մեծ տերությունների լուծելիք խնդիրներն են:

Գերմանիայի կողմից ֆաշիզմի դատապարտման, Երկրորդ աշխարհամարտում հրեական ցեղասպանության ճանաչման ու հատուցման փաստերը վերականգնեցին գերմանական ժողովրդի ու պետության պատիվը: Մինչդեռ Առաջին աշխարհամարտում հայկական ցեղասպանությունն իրականացրած, բայց չպատժված Օսմանյան Թուրքիայի իրավահաջորդ ներկայիս Թուրքիան ուղիներ է փնտրում խուսափելու պատասխանատվությունից: Ցեղասպանության պատմությունը ցույց է տալիս, որ նորագույն ժամանակներում զանգվածային ցեղասպանություններ հնարավոր է իրականացնել առավելաբար պատերազմի ժամանակ:

Այսօր էլ, 21-րդ դարի սկզբին, աշխարհի տարբեր մասերում իրականացվում են ցեղասպանության մասնակի ակտեր: Եթե ՄԱԿ-ի 1948թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժի մասին» կոնվենցիան չլրամշակվի և դրա իրականացման համար իրական ուղիներ չմշակվեն, ապա մարդկությունը կկանգնի նոր աղետների՝ պատերազմների առջև, որոնք կուղեկցվեն զանգվածային ցեղասպանություններով... Ուստի ցեղասպանության երևույթի գիտական հետազոտությունն ու ուսումնասիրությունն այսօր ունի ոչ միայն հումանիստական, այլև քաղաքական, միջազգային-իրավական նշանակություն:

Մինչև այժմ Հայոց ցեղասպանության հիմնահարցն ուսումնասիրող գիտնականների զգալի մասն իր առջև խնդիր է դրել ապացուցելու Թուրքիայում հայերի նկատմամբ գործած ցեղասպանությունը և մեծ տերությունների շահախնդիր անտարբերությունը հայության ճակատագրի ու եղեռնի հանդեպ: Գրեթե բոլոր ուսումնասիրողները մեղադրել են նաև մեծ տերություններին, բացահայտել հատկապես Գերմանիայի մեղսակցությունը Հայոց մեծ եղեռնին: Այսինքն նրանք ստիպված են եղել ապացուցելու վաղուց արդեն ակնհայտն ու հայտնին, քանզի միջազգային համագործակցության երկրների գերակշիռ մասը ցայսօր պաշտոնապես չի ընդու-

նում Հայոց ցեղասպանության փաստը և Թուրքիայի ներկա իշխանությունների, որպես իրավահաջորդի, պատասխանատվությունը:

Պատմաբանների ուշադրությունը շեղում է նաև թուրքական պատմագրության՝ Հայոց ցեղասպանության մերժման կոնցեպցիան: Եթե թուրքական պատմագրության կեղծարարությանը մշտապես պիտի հակահարված տալ, ապա անիմաստ է Արևմուտքին մեղադրել այն բանի համար, որ նա իր շահերը գերադասել է հայության շահերից...

Մեր կարծիքով՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման շահերից չի բխում նաև Հայոց մեծ եղեռնին Գերմանիայի մեղսակցության խնդրի շեշտադրումը: Այն կարող էր արդյունավետ լինել 1919-1922թթ. վերսալ-վաշինգտոնյան համակարգում և 1945-1947թթ. Սան-Ֆրանցիսկոյի, Պոտսդամի, Լոնդոնի, Մոսկվայի, Փարիզի կոնֆերանսներում և խորհրդակցություններում, բայց՝ ոչ այժմ: Չէ որ Հայոց ցեղասպանության խնդիրը ոչ միայն պատմագիտական, այլև միջազգային-դիվանագիտական հիմնահարց է:

Կոմունիստական-վարչակարգի օրոք քաղաքական, գաղափարական և դիվանագիտական նպատակներով Հայկական հարցի թե՛ հետազոտումը, թե՛ բարձրացումն արհեստականորեն առանձնացված էր Հայոց ցեղասպանության հիմնահարցից, իսկ վերջինիս ուսումնասիրությունը գրեթե արգելված էր: Օրինակ, երբ 1946-1953թթ. Ստալինի նախաձեռնությամբ բարձրացվել էր Հայկական հարցը, խոսք անգամ չկար Հայոց ցեղասպանության մասին: Ավելին, Հայկական հարցի ծագումը տարվել էր մինչև թուրքերի կողմից Հայաստանի նվաճումը: Ընդ որում, պատմաբաններն ազատ էին Հայկական հարցի ծագման ժամանակագրական հարցում:

Խորհրդային համակարգի փլուզումից և Հայաստանի անկախությունից հետո, կամաց-կամաց կարծես շտկվում են սխալ հայեցակարգերը: Այդ խնդրում նկատելի արդյունքներ տվեցին 1995թ. Հայոց մեծ եղեռնի 80-ամյակին նվիրված գիտաժողովները, որոնք կազմակերպվել էին Մոսկվայում և Երևանում: Գիտաժողովներում ներկայացված զեկուցումներն արդեն ունեին վերլուծական բնույթ: Որոշ զեկուցումներում գրեթե նույնացվում էին «Հայկական հարց» և «Հայոց ցեղասպանություն» հասկացությունները, ռասիզմը և ֆաշիզմը դիտվում էին որպես ցեղասպանության պատճառներ: Իհարկե, այդ դատողությունները վերաբերում էին ոչ թե 19-րդ դարի 2-րդ կեսին, այլ՝ 20-րդ դարի սկզբներին:

Մինչև խնդրո բուն նյութին անցնելը, հարկ է ընդգծել հետևյալ հանգամանքները: Հայկական հարցն առնչվում է միայն Հայոց ցեղասպանությանը. Հայոց ցեղասպանությունն է «Հայկական հարց» հասկացության սկզբնավորման պատճառը, այլ ոչ թե հակառակը: Առանց Հայոց ցեղասպանության Հայկական հարցը կամ գոյություն չունի, կամ գոյություն ունի այն ձևով, ինչ ձևով գոյություն ունեն պետականությունը կորցրած և այն վերագտնելու համար պայքարող ժողովուրդների ազգային հարցերը: Այդքանով իսկ՝ Հայկական հարցը գոյություն ունի որպես միջազգային իրավունքի հարց: Այդ կապակցությամբ հարկ է ներկայացնել Հայկական հարցի ըստ իս առավել ամփոփ սահմանումը:

Հայկական հարցը կամ Հայ դատը որպես Հայոց ցեղասպանության հետևանք, միջազգային իրավունքի հարց է: Այն առաջացել է 19-րդ դարի երկրորդ կեսին՝ 1856թ. Փարիզի և 1878թ. Բեռլինի կոնֆերանսների

9-րդ և 61-րդ հոդվածներով ու դրանց հաջորդած միջազգային իրավական այլ որոշումներով: Այն ընդհանրացնում է հայության, միջազգային հանրության և պետությունների միջազգային համագործակցության պայքարը՝ Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում բարենորոգումներ իրականացնելու և կանխելու հայերի ցեղասպանությունը, իսկ 1915թ. Հայոց մեծ եղեռնից հետո՝ ճանաչելու Հայոց ցեղասպանությունը և դրա համար պատժելու ցեղասպան պետության իրավահաջորդ Թուրքիային՝ սփյուռքահայերին վերադարձնելու իրենց հայրենիքը և փոխհատուցելու կորուստների արժեքը: Մենք, մեր նախորդ հրապարակումներից մեկում անդրադարձել ենք «Հայկական հարց», «Հայոց ցեղասպանություն» և «Ֆաշիզմ» հասկացությունների պատճառահետևանքային կապերին: Ներկա հոդվածում փորձ է արվում միջազգային իրավունքի շրջանակներում շարունակել այդ կապերի բացահայտումը. ֆաշիստական գաղափարախոսության կիրառումը ներկայացնել որպես ցեղասպանության հիմնական պատճառ, իսկ ցեղասպանությունը՝ ֆաշիզմը բնորոշող ամենաէական հատկանիշ, նպատակ ունենալով միջազգային իրավունքի պատկերի վրա գտնել այն իրավական պատմական և բարոյական ուղիները, որոնք նպաստելու են Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը և այդ հանցագործության պատժի իրականացմանը:

Մարդկության հայտնի նվաճումներ հանդիսացող դասական գաղափարներն ու տեսությունները բոլոր կուսակցական-քաղաքական գաղափարախոսությունների համար ծառայել են որպես աղբյուր, որից այդ գաղափարախոսությունների տեսաբաններն օգտվել են յուրովի՝ վերցրել են այն ձևակերպումներն ու դատողությունները, որոնք համահնչյուն են եղել իրենց խմբի կամ կուսակցության շահերին: 20-րդ դարի գրեթե բոլոր գաղափարախոսությունների (այդ թվում ֆաշիզմի) արմատները սնվել են 18-րդ դարի վերջին Ֆրանսիական հեղափոխության և 19-րդ դարի սկզբին նապոլեոնյան պատերազմների շրջանում առաջացած դասական տեսություններից՝ սոցիալիզմ, լուսավորչություն, տնտեսագիտություն, փիլիսոփայություն: Ուստի «Ցեղասպանության պատճառները, հետևանքները» հիմնահարցն ամբողջական և համակողմանի ուսումնասիրելու համար նախ, կարծում ենք, անհրաժեշտ է անդրադառնալ 19-րդ դարի քաղաքական վերլուծությանը:

* * *

19-րդ դարի առաջին կեսին Եվրոպայի պատմությունը բնութագրվում է միջազգային առաջին համաժողովի՝ Վիեննայի կոնգրեսի և «Սրբազան միության» սահմանած առևտրա-տնտեսական, քաղաքական, միջազգային իրավունքի, տարածքային, սահմանադրական և կրոնական նոր կարգավիճակով: Չնայած 1821, 1830 և 1848-49թթ. ազգային-ազատագրական շարժումները և հեղափոխությունները ցնցեցին Վիեննայի կոնգրեսի և «Սրբազան միություն» որոշումների հիմքերը, այնուամենայնիվ այդ ակտերն ուրվագծերին Եվրոպայում քաղաքական-իրավական և կրոնական համակարգը, որը գոյատևեց մինչև Ղրիմի, ֆրանս-պրուսական և 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմները:

Սկսած Վերածննդի դարաշրջանից Եվրոպայի մեծ տերությունների դրամատիրական հարաբերությունների մեջ ներքաշվելու գործընթացը (բացի նրանց մերկ շահախնդրություններից) նպաստեց նաև համամարդ-

կային արժեքների պաշտպանությանը, որոնց մեջ կենտրոնականը մարդու և ազգերի իրավունքների պաշտպանությունն էր: Առաջին հումանիստական ակտը նեգրերի վաճառքի արգելումն էր, որն ընդունվեց Վիեննայի կոնգրեսի 1815թ. փետրվարի 8-ի հայտարարությամբ և կազմեց կոնգրեսի եզրափակիչ ակտի թիվ 15 հավելվածը:[1] Այն արժանացավ նույնիսկ «Սրբազան միության» հավանությանը: «Սրբազան միությունը» իր 1822թ. դեկտեմբերի 11-ին Վերոնայի կոնգրեսի որոշման մեջ հայտարարեց, որ նեգրերի վաճառքը ամայացրեց Աֆրիկան, ստորացրեց Եվրոպային և անպատվեց մարդկությանը...:[2]

Մեծ տերությունների կողմից հումանիստական հաջորդ քայլը հույն ժողովրդի ազատագրական պայքարին և Հունաստանի անկախությանը սատար լինելու փաստերն են (1826-1830թթ.): Իհարկե, բոլոր առաջադիմական-հումանիստական քայլերի ետնախորշում թաքնված էին մեծ տերությունների կամ առանձին հզոր տերության շահերը: Ասենք, օրինակ, բամբակի արտադրության և վաճառքի շուրջ միջազգային շուկայում անգլո-ամերիկյան մրցակցությունը պատճառ դարձավ, որ Անգլիայի նախաձեռնությամբ 1841թ. կնքվի ստրկավաճառությունն արգելող միջազգային կոնվենցիան:[3]

19-րդ դարի սկզբներից Օսմանյան կայսրությունը նույնպես ներքաշվեց դրամատիրական հարաբերությունների հորձանուտը: Սակայն Թուրքիան իր տնտեսական, էթնիկական, կրոնական և մշակութային խայտաբղետությամբ և կառավարման ռազմա-ավատատիրական բնույթով ի վիճակի չէր դրամատիրական կարգերի զարգացմանը բնորոշ բարեփոխումներ կատարել և թեթևացնել այլազգիների, հատկապես քրիստոնեաների վիճակը: Այդ իրավիճակն ակնհայտ էր դարձրել Թուրքիայի մոտալուտ փլուզումը, ազգային-ազատագրական պայքարի վերելքը և թուրքական ժառանգության համար մեծ տերությունների մրցակցությունը: Եվրոպական տերություններից յուրաքանչյուրը ձգտում էր տիրել օսմանյան ժառանգության առավել մեծ մասին: Կոնստանդնուպոլսի անկումից հետո, 1453 թվականից սկսած, թուրքական ժառանգությանը տիրելը Ռուսաստանի համար ստացել էր «օրինական» և «կրոնական» նշանակություն: «Ցարգրադի» և Բյուզանդիայի ազատագրումը վաղուց արդեն դարձել էր Ռուսաստանի արտաքին քաղաքականության, իսկ Ռուսաստանի այդ նկրտումներին խոչընդոտելը՝ արևմտյան տերությունների հիմնական շահագրգռություններից մեկը: Այդ հակասությունը դարձավ Արևելյան և Հայկական հարցերի քաղաքական առանցքը: Այդ կապակցությամբ արժե հիշատակել Ֆրանսիայի լրագրող Մ. Էդդար Գրանվիլի 1917թ. հայտնած կարծիքը: Նա գրել է, որ Ռուսաստանի նվաճողական քաղաքականությունը և ռուսական դիվանագետների խարդավանքները, Եվրոպայի հետևողական միջամտությունը թուրքական գործերին՝ պատճառ է Թուրքիայի բոլոր աղետների և կիզակետը՝ ամբողջ արևելյան և նրա հոգեզավակ Հայկական հարցի:[4] Հարկ է անպայման նշել, որ այս գնահատականն անշուշտ միակողմանի է:

18-րդ դարի վերջին եվրոպական պետությունների, մասնավորապես Ֆրանսիայի դիվանագիտական շրջանակներում հաճախ էին խոսում Օսմանյան կայսրության դեմ «խաչակրած արշավանք» կազմակերպելու մասին: Սակայն հսպանական ժառանգության պատերազմը ոչ միայն մի կողմ թողեց թուրքական հիմնահարցը, այլև պայմաններ ստեղծեց Բալթիկ

ծովի ավազանում Ռուսաստանի հզորացման համար: Հյուսիսային պատերազմի ավարտից հետո Ռուսաստանը ձգտում էր դուրս գալ Սև ծով և հասնել իր մեծագույն փափագին՝ Ցարգրադին (Կոնստանդնուպոլսին): Նրա այդ նկրտումներն Արևմուտքին, հատկապես Անգլիային, դարձրին կործանման եզրին կանգնած Թուրքիայի փրկարար: Մինչդեռ 1774թ. Քուչուկ-Կայնարջիի հաշտության 7, 8, 14-րդ հոդվածներով Ռուսաստանն արդեն հասցրել էր դառնալ Օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ հեծող քրիստոնյաների հովանավորն ու խնամակալը: Այս հանգամանքը կարելի է համարել Արևելյան հարցի սաղմնավորման սկիզբը: Սա է պատճառը, որ 19-րդ դարի սկզբին Ալեքսանդր Առաջինն իրավունք էր վերապահում իրեն հռչակել Թուրքիայի ճիրաններում տառապող քրիստոնյաների հովանավոր և ազատարար: Այդ կապակցությամբ Ա. Դեբիդուրը գրում է. «Նրա կարծիքով իր վրա է դրված վերջիններիս հովանավորության առաքելությունը և, անհրաժեշտության դեպքում՝ նրանց ազատագրումը»:[5]

Եվ որովհետև 18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին Արևմուտքն ավելի շատ էր զբաղված ֆրանսիական բուրժուական հեղափոխության և նապոլեոնյան պատերազմների պատճառած հոգսերով, քան Ռուսաստանը. նա չկարողացավ խանգարել Ռուսաստանի կողմից Թուրքիայի մերձսևծովյան տարածքների գրավմանը: Ռուսաստանը, շահելով Թուրքիայի դեմ մի շարք պատերազմներ, հաստատվեց Սև ծովի հյուսիսային ափերին, իսկ նապոլեոնյան Ֆրանսիայի պարտությունից հետո, 1815թ. Վիեննայի կոնգրեսի եզրափակիչ ակտով, էլ ավելի հզորացավ: Ինչպես հայտնի է՝ Ռուսաստանի նախաձեռնությամբ ու գլխավորությամբ 1815թ. ստեղծվեց «Սրբազան միությունը», որին Ռուսաստանը փորձում էր տալ նաև հակաթուրքական ուղղվածություն: Պատահական չէ, որ «Սրբազան միության» 1822թ. Վերոնայի կոնֆերանսում Ռուսաստանն առաջին անգամ հնչեցրեց «Արևելյան հարց» արտահայտությունը և հասավ նրան, որ ակնարկներ արվեն Թուրքիայի քրիստոնյաների պաշտպանության մասին: Ծնվեց Արևելյան հարցի նաև կրոնական հատկանիշը: Ռուսաստանն իրեն հռչակեց Օսմանյան Թուրքիայի տիրապետության ներքո տառապող քրիստոնյաների իրավունքների պաշտպանության երաշխավոր երկրորդ անգամ, թեև Հունական հարցում ակտիվություն էին ցուցաբերել նաև Անգլիան ու Ֆրանսիան: Ռուսաստանը դրժեց Անգլիային ու Ֆրանսիային թուրքական տարածքները չգրավելու մասին տված խոստումը՝ հաջողությամբ շարունակեց թուրքական ժառանգության համար հերթական պատերազմը և 1829թ. Ադրիանապոլսի պայմանագրով հաստատվեց Սև ծովի նաև արևելյան ու արևմտյան ափերին: Ավելին, նա օգնեց Թուրքիային Եգիպտոսի դեմ պատերազմում և որպես փոխհատուցում 1833թ. Ունքյար-Իսքելիսի պայմանագրով առավելություն ստացավ Բոսֆորի և Դարդանելի նեղուցներում՝ ռուսական ռազմանավերը կարող էին անարգել լողալ նեղուցներով:[6]

Արևմտյան տերությունները չէին կարող հանդուրժել թուրքական ժառանգության հարցում Ռուսաստանի գերակայությունը և Օսմանյան Թուրքիայի քրիստոնյաների հովանավորի նրա մենաշնորհը: Նրանք 1853-1856թթ. Ղրիմի պատերազմում միացան Թուրքիային և պարտության մատնեցին Ռուսաստանին: 1856թ. Փարիզի հաշտության կոնֆերանսի որոշմամբ նրանք ոչ միայն սանձեցին Ռուսաստանի միակողմանի ախորժակը, այլև նրա հետ կիսեցին օսմանյան լծի տակ հեծող քրիստոնյաների

պաշտպանության միջազգային իրավական և բարոյական մենաշնորհը (տե՛ս 1856թ. Փարիզի տրակտատի 9-րդ հոդվածը, որը կարելի է համարել ցեղասպանությունը կանխարգելող միջազգային իրավական առաջին ակտը). «Փարիզի հաշտության տրակտատը թուրքական քրիստոնյա հպատակներին, Ռուսաստանի նախկին միանձնյա խնամակալության փոխարեն դրեց եվրոպական մեծ տերությունների կոլեկտիվ պաշտպանության ներքո», - գրում է միջազգային իրավունքի հայտնի մասնագետ Ֆ. Սարտենսը:[7] Փարիզի խաղաղության կոնֆերանսը կարելի է համարել Արևելյան հարցի ձևավորման ավարտ. «Դասական չկա, որ 1856թ. Փարիզի տրակտատն Արևելյան հարցի պատմության դարակազմն է՝ ընդհանրապես, Ռուսաստանի արևելյան քաղաքականության պատմության մեջ՝ մասնավորապես»:[8]

Օսմանյան լծի դեմ առաջինն ընդվզեցին բալկանյան ժողովուրդները, իսկ հետո նաև՝ հայ ժողովուրդը: Նրանց ազգային-ազատագրական պայքարին սուլթանական Թուրքիան հակադրեց կանխամտածված բնաջնջման քաղաքականությունը՝ որպես հակադրություն Փարիզի տրակտատի 9-րդ հոդվածի: 1856թ. Փարիզի հաշտության կոնֆերանսի 9-րդ հոդվածով եվրոպական տերությունների կոլեկտիվ միջամտությունը Թուրքիայի ներքին գործերին, բնականաբար, էլ ավելի զայրացրեց սուլթանին և պատճառ դարձավ «Նոր օսմանների» ազգայնական կազմակերպության ձևավորման համար: Այս նախաֆաշիստական կազմակերպությունը դիմեց բոլոր միջոցներին՝ սկսած ռեֆորմներից, վերջացրած՝ բնաջնջումով, որպեսզի քրիստոնյաներին թուրքացնի կամ բնաջնջի, դրանով իսկ՝ բացառի արտաքին միջամտությունը թուրքական գործերին, կանխի Օսմանյան կայսրության մասնատումը: Օսմանյան կայսրությունում ապրող քրիստոնյաների կանխամտածված բնաջնջումը՝ գենոցիդի քաղաքականությունը և պայքարը դրա դեմ, կազմեց Արևելյան, իսկ հետո նաև Հայկական հարցի էական հատկանիշը:

Այսպիսով, Արևելյան հարցի ծագումը 18-րդ դարի վերջերից մինչև 1920-ական թվականները թուլացող Օսմանյան կայսրության ժառանգության համար եվրոպական տերությունների պայքարի արդյունք է, պայմանավորված՝ Եվրոպայում դրամատիրական հարաբերությունների զարգացման, օսմանյան լծի տակ հեծող քրիստոնյա ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի և, հատկապես, նրանց նկատմամբ կիրառված ցեղասպանության հանգամանքներով:

Հայկական հարցի, ցեղասպանության և ֆաշիզմի ծագումնաբանությունն ուսումնասիրելիս առավել կարևորվում է նաև 19-րդ դարի երկրորդ կեսի բնութագիրը: Գիտական հայտնագործությունները, արդյունաբերական հեղաշրջումն արագացրին դրամատիրական հարաբերությունների զարգացումը Եվրոպայում և ԱՄՆ-ում: Ուժեղացան սոցիալական, ազգային, դասակարգային, կրոնական և անհատական ճնշումները: Անհատները, սոցիալական խմբերը և դասակարգերը, ինչպես նաև ազգերը, դարձան առավել հաշվենկատ:

Եվրոպայում, հատկապես 1882թ. ստեղծված Եռյակ դաշինքի անդամ երկրներում և հետագայում այդ դաշինքին միացած Թուրքիայում, ձգտում էին ստեղծել ըստ ամենայնի ամբողջատիրական և միազգային պետություն, որը կարող էր կլանել, ազգային ու կրոնական փոքրամասնություններին: Ձևավորվեց և գաղափարախոսության վերածվեց ֆաշիստա-

կան ազգայնամոլությունը: Ազգայնամոլությունը ծնում էր շովինիզմ և ռասիզմ: Առաջացան պանգերմանիզմի, պանթուրքիզմի, պանիսլամիզմի և այլ ազգային-էթնիկական գաղափարախոսություններ: Տիրապետող ազգերի ազգային գերակայության զգացողությունը, ազգային ու կրոնական փոքրամասնությունների նկատմամբ խտրականությունն ու արհամարհանքն ուժեղացրին ազգային-ազատագրական շարժումները: Ազգային հարցը սրվեց Բալկաններում, Հայաստանում և Լեհաստանում: Մեծ թափ ընդունեց Թուրքիայում հայերի եղեռնի քաղաքականությունը, սկսեցին հրեական ջարդերը, հայ-թուրքական ընդհարումները Ռուսաստանում, դանիացիների և սլավոնների բռնի գերմանացումը Գերմանիայում և Ավստրո-Հունգարիայում: Սոցիալական և ազգային ճնշումներն արդեն 19-րդ դարի երկրորդ քառորդի վերջում սկզբնավորեցին ֆաշիստական համաշխարհային ամբողջատիրական մեկ այլ գաղափարախոսություն՝ կոմունիստական ինտերնացիոնալիզմը: ԱՄՆ-ում, որտեղ արդեն վաղուց տեղաբնիկ հնդիկները հալածվել և գրեթե անհետացել էին, ձևավորվում էին անհատի, ազգի, կրոնի և, հատկապես, շուկայի ազատության գաղափարախոսությունները՝ «անհատականությունն» ու «ազգերի ինքնորոշման իրավունքը»: Այս գաղափարախոսություններն արմատավորվեցին Եվրոպայում՝ որպես հակադրություն՝ Կոմունիստական ինտերնացիոնալիզմին և ֆաշիստական նացիոնալիզմին: Անհատի և ազգի իրավունքների պաշտպանության դոկտրինան տվեց իր արգասավոր պտուղները, նպաստեց դրամատիրության հետագա բարգավաճմանը և լուրջ հարված հասցրեց ֆաշիստական գաղափարախոսություններին: «Անհատականությունը» ու «Ազգերի ինքնորոշման իրավունքը» հետագայում խարխլեցին դրամատիրական և կոմունիստական ողջ գաղութային համակարգերը:

Ահա Եվրոպայում ընթացող վերոհիշյալ գործընթացների ֆոնի վրա պիտի ուսումնասիրել ցեղասպանության երևույթի և ֆաշիզմի ծագումնաբանությունը, որպեսզի պարզ դառնա նաև հայկական ցեղասպանության դրդապատճառներն ու բովանդակությունը:

* * *

Որպեսզի «Հայկական հարց», «ցեղասպանություն» և «ֆաշիզմ» հասկացությունների պատճառահետևանքային կապն ավելի հանգամանալի ու ամբողջական ներկայացվի, կարծում ենք անհրաժեշտ է նախ բնութագրել ֆաշիզմն ընդհանրապես, իսկ ապա, թող որ թռուցիկ, անդրադառնալ ոչ միայն թուրքական, այլև ֆաշիզմի մեզ ծանոթ մյուս տարատեսակներին՝ նացիզմին և կոմունիզմին:

Մեզ թվում է՝ ֆաշիզմը սաղմնավորվել է ավելի վաղ (19-րդ դարի երկրորդ կեսից), քան նրա անվանումը (1919թ.): Մինչև այժմ «ֆաշիզմ» հասկացությունն իրեն բնորոշող հատկանիշների առատության պատճառով չունի և չի ունեցել միանշանակ սահմանում: Այդ հանգամանքը հնարավորություն է տվել, որպեսզի քաղաքական նպատակներով շահարկվի այն: Ֆաշիզմի սահմանումը տվող այս կամ այն քաղաքական ուժը կամ ռեժիմն առաջին հերթին նկատի է ունեցել իր սոցիալական-տնտեսական կամ ազգային-քաղաքական շահերը: Ուստի, հաճախ քաղաքական-պետական որոշակի կառույցներ, պետական-պաշտոնական այրեր և ընդդիմադիր ուժեր իրենց համար անցանկալի կազմակերպություններին ու անհատներին կպցրել են «ֆաշիստական» պիտակը՝ վարկաբերելու կամ հա-

լածելու նպատակով: Ավելին, այդ հողի վրա երբեմն արգելվել է այս կամ այն ազգային-հայրենասիրական կազմակերպության գոյությունը, նույնիսկ այն ժամանակ, երբ նա պայքարել է իրական ֆաշիզմի դեմ:

ԽՍՀՄ քաղաքական գրականության մեջ ֆաշիզմի բնորոշման հիմքում հիմնականում ընկած էր 1933թ. Կոմինտերնի գործկոմի 13-րդ պլենումի որոշումը, որտեղ ֆաշիզմը բնութագրվել է որպես «ֆինանսական կապիտալի առավել ռեակցիոն, առավել շովինիստական, առավել իմպերիալիստական տարրերի բացահայտ տեռորիստական դիկտատուրա»:[9] 1945 թվականից՝ ֆաշիստական Գերմանիայի ջաղջախումից հետո, փորձեր արվեցին տալ ֆաշիզմի նոր բնութագրումը: Ավելացան ֆաշիզմի նոր հատկանիշներ՝ մարտնչող հակակոմունիզմ, հակաժողովրդավարություն, ռասիզմ, այլ ժողովուրդներին ու երկրներին շահագործելու տեսության արդարացում, ագրեսիվություն, սպառազինություն, ուժի և առաջնորդի պաշտամունք, բռնություն, ամբողջատիրություն և այլն:[10] Կոմունիզմի և ֆաշիզմի երդվյալ թշնամի Ռ. Չերչիլը հետևյալ կերպ է բնութագրել ֆաշիզմը. «Ֆաշիզմն ըմբոստություն է Աստծո դեմ, որը տիրապետում է ինտենսիվ հայրենասիրության, նույնիսկ քրիստոնեական զգեստավորմամբ գրավչությանը, [illegible] հայրենասիրությունը՝ խելակորույս է, նրա կարգապահությունը՝ [illegible]ական է, նրա կարգը՝ կոպտություն է, նրա քրիստոնեությունը՝ կեղծ»:[11]

Հայտնի է, որ ֆաշիզմին բնորոշ է հոգեկան ներգործության հատկությունը, որը խարխլվում է հուզականության, ինչպես նաև կենդանական բնազդների և ենթագիտակցության վրա: Հետևաբար, ֆաշիզմը բացառում է բանականությունը և քարոզում է բնականություն, այսինքն՝ այն իրացիոնալ ուսմունք է:[12]

Ցեղասպանության հայտնի հետազոտող ֆրանսիացի Ի. Տերնոնը, ընդհանրացնելով և զուգահեռներ անցկացնելով երիտթուրքերի և նացիստների կատարած հանցագործությունների միջև գրում է. «Ինչպես նոր ժամանակների բոլոր մեծ հանցագործությունները, հայկական ցեղասպանությունը ծավալվել է մոլագար նևրոզի տրամաբանական ընթացքին համաձայն»:[13]

Փորձելով հստակեցում մտցնել ֆաշիզմի բնորոշման մեջ՝ Ռուսաստանի նախագահ Բ. Ն. Եցինը 1995թ. իրավասու գիտնականներին հրահանգ տվեց մշակել ֆաշիզմի նոր սահմանումը: Սակայն այդ փորձը նույնպես չտվեց ցանկալի արդյունք, կրկնվեցին ֆաշիզմի բնութագրման նախկին գրեթե բոլոր հատկանիշները: Մինչդեռ ֆաշիզմը բնորոշող ամենաէական հատկանիշը ցեղասպանության քաղաքականությունն է:

Պաշտոնական գրականության մեջ ընդունված է ֆաշիզմի սկզբնավորումը սկսել 19-րդ դարի վերջերից և 20-րդ դարի սկզբից՝ հանձին գերմանական նացիզմի, իտալական ֆաշիզմի և պանթուրքիզմի ձևավորման: 1894թ. Փարիզում լույս տեսավ Կումս դը Գոբինոյի «Ակնարկ մարդկային ցեղերի անհավասարության մասին» գրքի առաջին հատորը, որը ընդունված է համարել ֆաշիզմի մասին առաջին աշխատությունը: Սակայն ֆաշիզմի նախադրյալները, փաստորեն, առաջացել են ավելի վաղ՝ 19-րդ դարի առաջին կեսին՝ 1815թ. Վիեննայի կոնգրեսից հետո, երբ սկիզբ դրվեց Գերմանիայի միավորմանը, Իտալիայի ազատագրական պայքարի և Արևելյան հարցին: Ինչպես ամեն մի ուսմունք, ֆաշիզմը նույնպես ունի իր առաջացման տնտեսական, սոցիալ-քաղաքական, ազգային-հոգեբանա-

կան ակունքները: Ֆաշիզմի սկզբնավորման ակունքներն ու նախադրյալները նպատակահարմար է ներկայացնել ըստ նրա տարատեսակների:

* * *

Այն պահից, երբ Նապոլեոն Բոնապարտը ստեղծեց «Հռենոսյան միությունը», սկիզբ դրվեց Գերմանիայի միավորմանը: Գերմանական բոլոր պետություններում սկսվեց հայրենասիրական-ազգայնական շարժում՝ հանուն Գերմանիայի վերջնական միավորման, ստեղծվեց ազգամեծար գրականություն... Միաժամանակ Իտալիայում խմորվում էր ազգային ազատագրական պայքարի գաղափարը: Ընդ որում, Գերմանիայում և Իտալիայում լույս տեսնող ազգայնական գրականության մեջ արդեն խոսվում էր որոշ ազգերի առավելությունների մասին:

19-րդ դարի երկրորդ կեսին վերջապես հաջողվեց Գերմանիայի միավորումը, Իտալիայի ազատագրումն ու միավորումը: Ունենալով տնտեսական և մտավոր հարուստ ներուժ՝ այդ երկրները ցուցաբերեցին ծայրահեղ ակտիվություն՝ շտկելու աշխարհում հաստատված «անարդար» կարգավիճակը, վերաբաժանելու բաժանված աշխարհը: Պատահական չէ, որ Առաջին աշխարհամարտում Գերմանիան, Ավստրո-Հունգարիան, Իտալիան և Թուրքիան հանդես եկան մեկ ռազմական դաշնությունում: Միազգային տերություն և համաշխարհային տիրապետություն ստեղծելու գաղափարը նրանք խարսխում էին իրենց ցեղային և ազգային առավելությունների վրա՝ հանուն ընդունակ և ուժեղ ազգի բարօրության: Ֆ. Նիցշեն առաջ քաշեց «կյանքի փիլիսոփայությունը»: Գերմանիայի կանցլեր Օ. Բիսմարկն արդեն սկսել էր կիրառել «պրուսական սոցիալիզմը», որը հետագայում հանդիսացավ «նացիոնալ-սոցիալիսների» քաղաքական համակարգի նախատիպը: Նացիզմին գաղափարական սնունդ տվեցին նաև գերմանական փիլիսոփա Օ. Շպենգլերի փիլիսոփայական հայացքները: Օ. Շպենգլերը սոցիալիզմի գաղափարի սկզբնավորումը Գերմանիայում պայմանավորում էր կայզեր Ֆ. Վիլհելմ I անվան հետ. «Ոչ թե Մարքսը, - գրել է նա, - այլ Ֆ. Վիլհելմ I է եղել գերմանական առաջին սոցիալիստը»:[14] Նացիզմի շատ տեսաբաններ սկսեցին ազգը բնութագրել որպես զուտ կենսաբանական երևույթ: Նրանք Դարվինի ուսմունքից հանեցին հիմնական գաղափարը՝ պատմականությունը, բնական էվոլյուցիայի տեսությունը և հենվեցին միայն «գոյության պայքարի» տեսության վրա: Ժողովրդի փրկիչ համարեցին «ուժեղ մարդուն»: Ըստ նրանց առաջնորդը հանդես է գալիս որպես առաքյալ:

Գերմանական նացիզմին և իտալական ֆաշիզմին երկրորդ շնչառություն հաղորդեց և այն վերջնականապես ձևավորված գաղափարախոսության և կուսակցության վերածեց այնպիսի հանգամանք, ինչպիսին էր 1919թ. Վերսալի կոնֆերանսի որոշումը: Այդ որոշմամբ Գերմանիան՝ որպես պարտվող երկիր, ստորացված էր, իսկ Իտալիան՝ հաղթողների մեջ պարտվող...

* * *

Հարկ է նշել նաև, որ 19-րդ դարի երկրորդ կեսին Եվրոպայում առաջացել էր կոմունիստական հզոր շարժում, որը բանվորների սոցիալական և ճնշվող ազգերի ազգային-ազատագրական շարժումները միավորելու գաղափարախոսությամբ փորձում էր միանգամից համաշխարհային տիրա-

պետություն ստեղծել (սկզբում գերմանական, իսկ հետո՝ ռուսական): Կոմունիստական շարժումը վտանգում էր գաղութատեր պետությունների գաղութային համակարգը և նրանց ներքին կայունությանը: Այն վնասում էր նաև ազգային միությանը Գերմանիայում և Իտալիայում: Այդ պատճառով կոմունիստական գաղափարախոսության դեմ միավորվեցին բոլոր շահագրգիռ ուժերը: Չնայած գոյություն ունեցող անտագոնիզմին, կոմունիզմի և ֆաշիզմի միջև առկա են մի շարք ընդհանրություններ: Դրանք են՝ սոցիալիզմը, ամբողջատիրությունը, հակաժողովրդավարությունը, դրամատիրության (ազատ մրցակցության) քննադատությունը, ուժի և անհատի պաշտամունքը, հակաքրիստոնեությունը և վերջապես՝ ցեղասպանության քաղաքականությունը:

Իրենց հեռավոր նպատակին հասնելու համար կոմունիստները նույնպես չէին խորշում դիմել ծայրահեղ միջոցների՝ եղեռնի և տեռորի: Օրինակ՝ ռուսական բոլշևիկները Լենինի գլխավորությամբ հանուն համաշխարհային հեղափոխության հաղթանակի պատրաստ էին զոհաբերել միլիոնավոր լեհեր, հայեր, ռուսներ...: Շվեդ նշանավոր քաղաքական գործիչ Պեր Ալմարկն իր «Քաց վերք» գրքում գրում է, որ անցնող դարաշրջանում ցեղասպանությունը մարդկությունից խլել է համարյա չորս անգամ ավելի զոհ, քան 20-րդ դարի բոլոր պատերազմները միասին: Ըստ նրա ուսումնասիրության՝ 20-րդ դարի խաղաղ ժամանակաշրջանում աշխարհի տարբեր պետություններում ոչնչացվել է 170 մլն. մարդ, որից 110 մլն. բաժին է ընկնում կոմունիստական կողմնորոշում ունեցող երկրներին:[15]

* * *

19-րդ դարի առաջին կեսին Եվրոպական բուհերում կրթություն ստացած, ֆրանսիական լուսավորիչների, գերմանական փիլիսոփաների գաղափարները յուրացրած թուրք երիտասարդները չէին համակերպվում սուլթանի բռնապետության և թուրքական գործերին Արևմուտքի միջամտության հետ: Նրանք ցանկանում էին երկրում հաստատել սահմանադրական կարգեր: Սակայն նրանց նախագծած սահմանադրությունը պահպանելու էր իսլամի ավանդույթները և ապահովելու էր կայսրության այլազգիների՝ մասնավորապես քրիստոնեաների թուրքացումը: 1865թ. կազմակերպվեց «Հայրենասերների միությունը», որը հետո անվանվեց «Նոր օսմանների միություն»:

Նոր օսմանները սուլթանի միապետությունը տապալելու և կայսրության ամբողջականությունը պահպանելու նպատակով պատրաստ էին դիմել բռնության ծայրահեղ միջոցների՝ զինված ապստամբության՝ միապետությունը տապալելու, եղեռնի՝ այլազգիներին ձուլելու կամ բնաջնջելու համար:

«Նոր օսմանների» գաղափարախոսները ձևավորեցին «օսմանիզմի» դոկտրինան, ըստ որի սուլթանի բոլոր հպատակները «օսմաններ են՝ նույն հայրենիքի երեխաները», անկախ դավանանքից: Նրանք, բնականաբար, մերժում էին ոչ թուրք ազգերի ազգային-ազատագրական շարժումները, տեսականորեն անիմաստ էին համարում դրանք:[16] Այդ հարցում նոր օսմանների և սուլթանի գաղափարները համահունչ էին: Նոր օսմանների հայացքները փոխանցվեցին երիտթուրքերին: «Եվրոպայում «նոր օսմաններին» հենց սկզբից «ժեռն թուրքեր»՝ «երիտթուրքեր» էին անվանում»:[17] Ձևավորվեց երիտթուրքերի գաղափարախոսությունը՝ պանթուր-

քիզմը: Ըստ ռուս արևելագետ Նադեին-Ռաևսկու՝ «պանթուրքիզմը» բառիս լայն իմաստով նշանակում է հայացքների այնպիսի համակարգ, ըստ որի աշխարհում ամեն ինչ չափվում է «թուրք»-ի ունեցած դերով, իսկ նեղ իմաստով՝ թուրքական ազգայնական կայսերապաշտ շրջանների ագրեսիվ, ռասայական, շովինիստական դոկտրինա է, որը հռչակում է բոլոր թուրքալեզու ժողովուրդներին մեկ միասնական «թուրքական պետության» մեջ միավորելու նապատակ»:[18] Եթե նոր օսմանները փորձում էին կանխել Օսմանյան կայսրության մասնատումը և Արևմուտքի միջամտությունը թուրքական գործերին, ապա երիտթուրքերը ձգտում էին ստեղծել համաթուրքական համաշխարհային տերություն, ուստի սրանք ավելի ագրեսիվ, ասել է թե՝ ավելի ֆաշիստ էին, քան նոր օսմանները: Պանթուրքիզմի ֆաշիստական էությունը դիպուկ է խոստովանել մի թուրք բանաստեղծ թուրքական «Ազմ» թերթում. «Ամեն մի զինվոր պետք է վերադառնա բարբարոսության շրջանին, արյուն տենչա, անխնա լինի, սպանելով մանուկներին, կանանց, ծերերին և հիվանդներին... Մեզանից հետո թողնենք արյուն, տառապանք, անարդարություն, սուգ՝ միայն այդպես մենք կշահենք քաղաքակիրթ աշխարհի համակրանքը»:[19]

Ընդհանրացնելով ֆաշիզմի տարատեսակների բնութագրումը կարելի է եզրակացնել. ֆաշիզմը, որպես ազգայնական, ագրեսիվ, իռացիոնալ, ամբողջատիրական, հակաքրիստոնեական գաղափարախոսություն, սկզբնավորվել է 19-րդ դարի երկրորդ կեսին, համեմատաբար մեծ կամ տիրապետող այն ազգերի մտավորականների շրջանում, որոնք ուծացման, պատերազմի և ցեղասպանության միջոցով ծրագրում էին լուծել իրենց երկրների առջև ծառացած բարդ խնդիրները՝ ստեղծել միազգային տերություն կամ կանխել կայսրության փլուզումը: Ֆաշիզմի նախատիպերն էին՝ նոր օսմանիզմը, պանգերմանիզմը, պանսլավոնիզմը, կոմունիզմը...

20-րդ դարի սկզբին ֆաշիստական կազմակերպությունները վերածեցին կուսակցությունների, որոնք նույն մեթոդներով փորձում էին ստեղծել համազգային կամ համաշխարհային տիրապետություն: 20-րդ դարի սկզբին ֆաշիզմի աչքի ընկնող տեսակներն էին պանթուրքիզմը՝ Թուրքիայում, նացիզմը՝ Գերմանիայում, ֆաշիզմը՝ Իտալիայում, բոլշևիզմը՝ Ռուսաստանում:

20-րդ դարի առաջին կեսին ֆաշիզմի կողմից մարդկության դեմ իրականացվել են երեք խոշոր ցեղասպանություններ՝ Առաջին աշխարհամարտի տարիներին՝ արևմտահայերի Մեծ եղեռնը, Երկրորդ աշխարհամարտի տարիներին՝ հրեաների ողջակիզումը և սլավոնների եղեռնը, 1917-1937 թվականներին Ռուսաստանում՝ «դասակարգային» եղեռնը:

* * *

Արևելյան հարցի սրման առնչությամբ ցեղասպանության առաջին ակտերը, ինչպես ասվեց, արձանագրվել են դեռևս 19-րդ դարի 20-ական թվականներից՝ հույների, բալկանյան սլավոնների, Լիբանանի քրիստոնյաների և հայերի նկատմամբ: Այնուհետև այդ ոճրի մեթոդները գնալով կատարելագործվեցին և ցեղասպանությունն ընդունեց օրինաչափ բնույթ՝ Օսմանյան կայսրությունում հայերի, իսկ հետագայում, ֆաշիստական Գերմանիայում՝ հրեաների նկատմամբ:

Անժխտելի է միջազգային առաջադեմ հասարակայնության անշահախնդիր աջակցությունը և մեծ տերությունների շահախնդիր ջանքերը

մարդու և ժողովուրդների իրավունքների պաշտպանության, ինչպես նաև ցեղասպանության կանխարգելման ուղղությամբ՝ սկսած 1815թ. Վիեննայի կոնգրեսի՝ նեգրերի վաճառքն արգելելու մասին հայտարարությունից, վերջացրած ՄԱԿ-ի 1948թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայով:

1815 թվականի Վիեննայի և 1822 թվականի Վերոնայի կոնգրեսներից սկսած միջազգային իրավունքի մեջ հեղաշրջում կատարվեց՝ ստեղծվեց մեծ տերությունների համագործակցություն, որը կոչված էր լուծելու միջազգային խնդիրներ: Այդ համագործակցության հաջորդ վեհաժողովներն էին՝ 1856թ. Փարիզի կոնֆերանսը և 1878թ. Բեռլինի կոնգրեսը: Միջազգային համագործակցության այդ փաստերը Գլադստոնը համարեց միջազգային իրավունքի հաստատման մեծագույն նվաճում՝ Եվրոպական քաղաքակրթության ղեկավար գաղափար:[20] Այս համագործակցությունը, ինչպես հայտնի է, հետագայում վերածվեց Ազգերի լիգայի, իսկ 1945 թվականից՝ ՄԱԿ-ի: 19-րդ դարի երկրորդ կեսին Եվրոպայի հզոր տերությունների՝ Անգլիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Ավստրո-Հունգարիայի և Պրուսիայի (հետագայում նաև Իտալիայի) միջպետական համագործակցության կենտրոնում Արևելյան հարցն էր, իր կնճռոտ կողմերով՝ հունական, լիբանանյան, բալկանյան և հայկական հարցերով:

Եվրոպական տերությունները, իրենց շահախնդրությամբ հանդերձ, փորձում էին կանխել քրիստոնյաների ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Ցեղասպանությունը կանխելու առաջին փորձն արվեց 1856թ. Փարիզի հաշտության կոնֆերանսի որոշման 9-րդ հոդվածով, որին հաջորդեցին մի շարք միջազգային իրավական ակտեր ու հայտարարություններ: Օրինակ, 1860թ. Սիրիայի եվրոպական գրավվման մասին կոնվենցիան, 1861թ. Լիբանանում բարեփոխումներ կատարելու մասին ռեգլամենտը, 1864թ. Լիբանանի հարցի վերաբերյալ պայմանագիրը, 1877թ. Արևելյան հարցի վերաբերյալ լոնդոնյան արձանագրությունը, 1878թ. Բեռլինի կոնգրեսի որոշումները և այլն:[21]

1878թ. Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածով, փաստորեն, Հայկական հարցն առանձնացավ Արևելյան հարցից: Հայկական հարցի առնչությամբ միջազգային ակտեր ու տրակտատներ ընդունվեցին նաև 20-րդ դարում, որոնց մեջ ուշագրավ է Անտանտի երկրների 1915թ. մայիսի 24-ի հայտարարությունը, որտեղ նրանք արևմտահայերի եղեռնը որակեցին որպես մարդկության և քաղաքակրթության դեմ գործած հանցագործություն:[22] Այդ բնութագրումն արտահայտվեց 1945թ. Նյուրնբերգի և Տոկիոյի զինվորական տribունալների կանոնադրություններում:

Նորաստեղծ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան իր 1946թ. դեկտեմբերի 11-ի բանաձևում արձանագրեց, որ ցեղասպանությունը միջազգային իրավական նորմերը խախտող հանցագործություն է: Այս քաղաքական գնահատականը, ինչպես նաև ցեղասպանության պատժելիությունը, օրենքի վերածվեց ՄԱԿ-ի 1948թ. դեկեմբերի 9-ի կոնվենցիայում:

Ըստ կոնվենցիայի երկրորդ հոդվածի, ցեղասպանությունը բնորոշող են այն բոլոր գործողությունները, որոնք նպատակ ունեն ամբողջությամբ կամ մասամբ ոչնչացնել որևէ ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խումբ՝ որպես այդպիսին: Այդ հոդվածի առանձին կետերում նշվում են ցեղասպանության իրականացման մեթոդները՝ սպանությունը, լուրջ մարմնական վնասներ կամ մտավոր խանգարում պատճառե-

լը, միտումնավոր այնպիսի պայմանների ստեղծումը, որոնք ուղղված են որևէ խմբի մասնակի կամ լրիվ ֆիզիկական ոչնչացմանը, մանկածնության կանխման միջոցները, երեխաների բռնի փոխանցումը մի մարդկային խմբից մյուսին:[23]

Քանի որ կոնվենցիան ընդունվել է ի հետևանք հրեական և սլավոնական ցեղասպանությունների, բնականաբար, լիովին չի կարող բավարարել Հայ դատից բխող իրավական պահանջները:

Կոնվենցիայի 2-րդ հոդվածի ոգուց ելնելով՝ կարելի է մարդկության դեմ հնագույն ժամանակներից գործած ամեն մի չարագործություն որակել որպես ցեղասպանություն, առավել ևս, որ հիշյալ կոնվենցիայում իրավաբանական վաղեմության մասին խոսք չկա: Ավելին, 1968թ. նոյեմբերի 26-ին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից ընդունվեց կոնվենցիա, որով պատերազմի, մարդկության դեմ կատարված հանցագործությունների համար մեղավորների նկատմամբ վաղեմության ժամկետը չի կիրառվում, այսինքն՝ գործում է օրենքի հետադարձ ուժը:

Ցեղասպանությունը, որպես մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն բնորոշող մեկ այլ կարևոր հանգամանք՝ կանխամտածվածության խնդիրն է: «Ցեղասպանությունը որպես միջազգային հանցագործություն ճանաչելու համար, - գրում է Ի. Արաբյանը, - նախ պետք է առկա լինի կանխամտածվածությունը...»:[24]

Հին և միջին դարերում պատերազմը եղել է գոյության միջոցներից մեկը: Այդ պատերազմներում, բնականաբար, եղել են զոհեր, պատմաբեմից անհետացել են ժողովուրդներ և պետություններ: Թագավորները և զորավարներն անգամ պարծենում էին այդ պատերազմներում իրենց զոհերի թվով և կատարած ավերածությունների չափերով: Սակայն նրանք այս կամ այն ժողովրդի կամ խմբի բնաջնջման հատուկ նպատակ ու ծրագրեր չեն ունեցել, այլ ձգտել են այդ ժողովուրդներին հարկատու դարձնել, թեև առանձին աղանդավորական կամ համաշխարհային կրոնական գաղափարախոսություններ մարդկանց հավատքի համար բնաջնջելու, մշակութային արժեքներ ոչնչացնելու կոչեր են արել: Օրինակ՝ իսլամի հետևորդները, նույնիսկ քրիստոնեությունն իր ինքնահաստատման ժամանակ թույլ են տվել բարբարոսություններ հեթանոսների և մուսուլմանների նկատմամբ (տե՛ս հեթանոսական կոթողների ոչնչացումն ու խաչակրաց արշավանքները): Բարբարոսություններ ու սարսափներ եղել են նաև նոր և նորագույն ժամանակներում, հատկապես գաղութային պատերազմների, Աֆրիկայի և Ամերիկայի յուրացման ժամանակ: Սակայն մինչև 19-րդ դարի երկրորդ կեսը՝ մինչև ֆաշիստական գաղափարախոսության սաղմավորումը, ոչ մի ժողովուրդ կամ պետություն նախապես պետականորեն, պաշտոնապես չի ծրագրավորել ու հրահանգավորել բնաջնջել մեկ ուրիշ ժողովրդի կամ դասակարգի՝ նրա տարածքը, ինչքն ու հայրենիքն յուրացնելու նպատակով, եթե դիմադրության չի հանդիպել: Թուրք-սելջուկները պատմական Հայաստանում քրիստոնեական հուշարձաններ գրեթե չեն ոչնչացրել, մինչդեռ այսօր ֆաշիստական ազգայնամոլ գաղափարներով հարբած «քաղաքակիրթ» թուրքերը Թուրքիայի և Ադրբեջանի հայկական տարածքներում ոչնչացնում են նույնիսկ համաշխարհային արժեք ներկայացնող մշակութային կոթողները...

ՄԱԿ-ի 1948թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի 2-րդ հոդվածի «դիտավորություն» և «միտումնավոր» հասկացությունները կարծես հիմք են

տալիս ցեղասպանության երևույթը դուրս բերել ժամանակագրական անորոշությունից և կոնկրետացնել: Կանխամտածվածության հանգամանքը ենթադրում է, որ ցեղասպանություն կարելի է համարել այն հանցագործությունը, որը նախապես ծրագրվում և բխում է պետական կամ կուսակցական որոշակի գաղափարախոսությունից:

Հասկանալի պատճառով ՄԱԿ-ի նշված կոնվենցիայի 2-րդ հոդվածում տեղ չի գտել սոցիալական հատկանիշը, թեև կոնվենցիան ստորագրող երկրները քաջ գիտեին, որ սոցիալ-դասակարգային հողի վրա ԽՍՀՄ-ում ոչնչացվել են միլիոնավոր մարդիկ: Նպատակահարմար է կոնվենցիայի 2-րդ հոդվածում ավելացնել սոցիալ-դասակարգային հատկանիշը և ցեղասպանությունը բնութագրել կամ ըստ գաղափարախոսությունների՝ պանթուրքիզմ, նացիզմ, բոլշևիզմ և այլն, կամ ըստ հատկանիշների՝ էթնիկական, ազգային, ռասայական, կրոնական և սոցիալ-դասակարգային: Անհրաժեշտ է առանձնացնել այլ ազգի տարածքը՝ հայրենիքը, յուրացնելու նպատակով գործած ցեղասպանությունը տնտեսական-մրցակցային կամ այլ հողի վրա կատարված ցեղասպանությունից: Չի կարելի հավասարեցնել առանձին խմբի և ողջ ազգի նկատմամբ իրագործած ցեղասպանության ակտերը: Համամարդկային շահերին ու արժեքներին, ինչպես նաև կայուն խաղաղության հաստատմանը կծառայեր, եթե ՄԱԿ-ի իրավասու հանձնաժողովներն ուսումնասիրեին և սահմանեին «հայրենիք» և «նախահայրենիք» հասկացությունները և դնեին միջազգային իրավական հողի վրա, մշակեին չափանիշներ և գործոններ, որոնցով հնարավոր լիներ որոշելու տվյալ տարածքի տիրոջ իրավունքը (պատմա-իրավական, էթնո-մշակութային, սոցիալ-տնտեսական, քաղաքական և այլն), քանզի քաղաքական հակասությունները, պատերազմները և ցեղասպանությունը հիմնականում առաջանում են տարածքներ նվաճելու պատճառներով:

Ցեղասպանությունը կիրառվել է այլ ազգերի կենսական տարածքներն յուրացնելու և այդ նպատակով տեղաբնիկներին հայրենիքից ու նախահայրենիքից զրկելու՝ բնաջնջելու նպատակով: Այդ առումով հրեական ցեղասպանությունը տարբերվում է հայկական ցեղասպանությունից: Ցեղասպանության հայկական և հրեական տարբերակները թերևս տնտեսական, մշակութային, մտավոր և նույնիսկ գաղափարական որոշ ընդհանրություններ ունեն, սակայն հիմնական հատկանիշներով՝ հայրենիքի և նախահայրենիքի կորստի հանգամանքով դրանք տարբերվում են: Թուրքիան կազմակերպել է հայերի ցեղասպանությունը հիմնականում Հայաստանին ընդմիշտ տիրելու նպատակով: Թուրք գիտնական Թախսին Ջելյալը խոստովանում է, որ հայերի ցեղասպանության հիմնական պատճառներից մեկը համարվում է Թուրքիայի ձգտումը ստեղծել միատարր Թուրքիա՝ հայրենիք միայն թուրքերի համար, մյուս պատճառները, ըստ նրա, տնտեսական ու բարոյական են:[25]

Հրեաները ցեղասպանության են ենթարկվել օտար տարածքներում՝ հարաբերական հայրենիքում, մինչդեռ հայերը՝ ոչ միայն իրենց հայրենիքում, այլև բնօրրանում՝ նախահայրենիքում: Բացի այդ՝ հրեական ցեղասպանությունը՝ Հոլոքոստը, իր մեջ չուներ տարածքային պահանջատիրություն:

Հրեաների նկատմամբ գործած ցեղասպանությունը գերմանական ներկա պետության ու ժողովրդի կողմից ճանաչվեց և փոխհատուցվեց,

որովհետև միջազգային հանրությունից բացի այն ճանաչել ու դատապարտել են Երկրորդ աշխարհամարտում հաղթած տերությունները: Այդ կապակցությամբ Ու. Չերչիլն ասել է. «Մարդկության թշնամին (գերմանական ֆաշիզմը – Ն. Ս.) բոլոր ազգերից իր ճանապարհին ընտրեց ամենամեծ արգելքը հանդիսացող հրեությանը: Մենք իրավունք չունենք մոռանալու հակաֆաշիստ հինգ միլիոն հրեա զոհերին»:[26]

Այնինչ՝ աշխարհի ոչ բոլոր հզոր տերություններն են ճանաչել ու դատապարտել թուրքական ֆաշիզմի՝ մարդկության դեմ գործած առաջին և ամենածանր հանցագործությունը՝ Հայոց ցեղասպանությունը: Նկատենք քաղաքական-դիվանագիտական մի նրբերանգ: Հայկական ցեղասպանությունը միայն այն պետությունների պաշտոնական փաստաթղթերում է նշվում «ցեղասպանություն» և պետական այրերի կողմից արտասանվում որպես այդպիսին, ովքեր ճանաչել և դատապարտել են այն, իսկ այն պետություններում, որոնք չեն ընդունել ու դատապարտել՝ ցեղասպանության հասկացության փոխարեն օգտագործում են «ջարդ» բառը: Նույնիսկ հայ պատմաբաններից ոմանք հայերի ցեղասպանությունը մինչև 1915թ. անվանում են «ջարդ» իսկ 1915թ. հետո՝ ցեղասպանություն: Ի դեպ, հայոց պատմագրության և քաղաքական գրականության մեջ Հայոց մեծ եղեռնի ժամանակագրությունը հաճախ ներկայացվում է տարբեր ձևերով՝ 1915-1916, 1915-1917, 1915-1918, 1915-1922, 1915-1923 թվականները: Կարծում ենք Հայոց մեծ եղեռն հասկացության տակ հարկ է հասկանալ Առաջին աշխարհամարտի տարիներին կատարված ցեղասպանությունը (1915-1918թթ.), քանզի, ինչպես նշեցինք, զանգվածային ցեղասպանության հանցագործությունը, որպես կանոն, իրագործվում է պատերազմների ժամանակ: Ինչ վերաբերում է Հայոց ցեղասպանության ավարտին, ապա Թուրքիայում այն ընդունել է շարունակական բնույթ: Կարծում ենք նաև, որ ցեղասպանության էությունը բնորոշվում է ոչ միայն զոհերի թվով, տարածքային ծավալի, ժամանակի, այն իրականացնող անձերի հանգամանքներով, այլ առաջին հերթին, ֆաշիզմի գաղափարախոսության առկայությամբ: Ուստի, ընդհանրացնելով վերը շարադրվածը, ցեղասպանության երևույթը կարելի է սահմանել ըստ ֆաշիզմի տարատեսակների (թուրքական, նացիստական, կոմունիստական և այլն) և իրականացման նպատակների (այս կամ այն ազգի հայրենիքն յուրացնելու, սոցիալ-տնտեսական ու քաղաքական համակարգը բռնի փոխելու և այլ նպատակներով): Այդքանով իսկ՝ ցեղասպանություն իրագործող պետության և քաղաքական ուժի հիմնական նպատակն է՝ հասնել տեղական (ազգային) կամ համաշխարհային (համազգային) տիրապետության:

* * *

Թվում է, թե ֆաշիստական ամբողջատիրական ռեժիմներից ու ցեղասպանությունից մարդկությանը կարող է փրկել միայն ժողովրդավարությունը, ազատ մրցակցությունը՝ «ազատ շուկան», որի պայմաններում թուլանում է պետության դերը: Այդ համակարգում մեծանում են անհատի ազատ գործունեության և ստեղծագործության հնարավորությունները: Իրոք, միայն ազատության մեջ մարդը կարող է անկաշկանդ արարել: Սակայն, այս պայմաններում նույնպես, հասարակական հարաբերություններում առաջնայինը մնում է «գոյության պայքարը». տնտեսական հզորությունը ծնում է հարկադրանք, ուժի պաշտամունք և ֆաշիզմին բնորոշ այլ

հատկանիշներ: Հասարակության գույքային խորը շերտավորման պատճառով մարդկանց զգալի մասը զրկվում է աշխատանքային գործունեությունից: Գործազուրկը դուրս է մնում մշակութային սպասարկումից և օտարվում է մարդկային բնականոն ու բանական ապրելակերպից: Սոցիալական բևեռացումը և գործունեության ազատությունը միաժամանակ առաջացնում են հանցագործությունների համար լայն դաշտ: Ստեղծվում է այնպիսի վիճակ, երբ ուժեղները կարողանում են անել ամեն ինչ, իսկ ունեզուրկները պատրաստ են ամեն ինչի... Մարդկանց արդեն ոչնչացնում են ոչ թե ազգային, կրոնական, այլ սոցիալական և անհատական հատկանիշներով...: Այս պայմաններում մարդկությանը պատերազմներից, ցեղասպանությունից և անհատական տեռորից կարող է փրկել այն համակարգը, որը կարտահայտի բոլոր ազգերի, խմբերի և անհատի շահերը:

Ցեղասպանությունը հնարավոր կլինի կանխարգելել, եթե վերացվեն ֆաշիզմ ծնող պայմանները, եթե պատժվի ամենացեղասպան պետությունը՝ Թուրքիան, եթե ՄԱԿ-ը վերածի համաշխարհային այնպիսի մի համակարգի, իր այնպիսի սահմանադրությամբ, որը բացառեր որևէ պետության կամ ազգի գերակայությունը... Իսկ մինչ այդ, հայությունը Հայոց ցեղասպանության դատի պաշտպանության երաշխիքները պիտի պայմանավորի իր ներուժի և ՄԱԿ-ի 1948թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի կիրառելիության միջոցով: Ցավոք, վերջինս առայժմ երաշխիքներ չի ապահովում պետություններին պատասխանատվության ենթարկելու՝ պատժելու համար: Չէ որ, վերջին հաշվով, ցեղասպանությունն առաջին հերթին պետական և գաղափարախոսական մակարդակի հանցագործություն է: Երբ հանցանքը վերաբերում է անհատին, ապա կոնվենցիան կարծես հնարավորություն է տալիս կանխելու և պատժելու (տես կոնվենցիայի 4-րդ և 7-րդ հոդվածները), իսկ պետություններին՝ ոչ (տես 6-րդ և 9-րդ հոդվածներում՝ առկա հակասությունները): ՄԱԿ-ի 09.12.48թ., 23.05.69թ. կոնվենցիաներից բխող պահանջները, ինչպես նաև՝ միջազգային իրավունքի պետական և այլ սուբյեկտների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման մասին իրավական ակտերը պարտավորեցնում են ՄԱԿ-ին, որպես նախորդ միջպետական միջազգային իրավական կառույցների իրավահաջորդի, ճանաչել Հայոց ցեղասպանությունը: ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը, ելնելով վերոհիշյալից, կարծում ենք՝ պարտավոր է հրահանգ տալ միջազգային քրեական դատարանին լսելու ցեղասպան պետության իրավահաջորդ Թուրքիայի դեմ հայության ներկայացվելիք հայցը՝ 1920թ. Սևրի պայմանագրով նախատեսված հայրենիքի և ցեղասպանության ենթարկված հայերի կորուստների արժեքի փոխհատուցման պահանջով:

Այսպիսով, թեև ՄԱԿ-ի 1948թ. «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիան մեծ նշանակություն ունի մարդու և ազգերի իրավունքների պաշտպանության գործում, հանդիսանում է պետությունների միջազգային համագործակցության խոշորագույն նվաճումը, այնուհանդերձ այն ընդհանուր է և դեկլարատիվ:

Հայաստանի Հանրապետությունը, օգտագործելով կոնվենցիայի 19-րդ հոդվածի ընձեռած հնարավորությունը, կարող է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի անունով պահանջ ներկայացնել՝ կոնվենցիան վերանայելու համար:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Ключников Ю. В. и Сованин А. Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч. I, М., 1925, стр. 117.
[2] Նշվ. աշխ., էջ 133:
[3] Курс международного права, т. 3, М., 1967, стр. 108.
[4] Աղոնց Ն. Հայկական հարցի լուծման շուրջ, Եր., 1989, էջ 42:
[5] Девидур А. Дипломатическая история Европы, М., 1947, стр. 129.
[6] СИЭ, т. 3, М., 1963, стр. 743.
[7] Мартенс Ф. Восточная война и Брюсельская конференция 1874-1878гг., С. Петербург, 1879, стр. 156-157.
[8] Там же.
[9] История фашизма в Западной Европе, М., 1978, стр. 25.
[10] Հայկական Սով. Հանրագիտարան, հ. 12, Ե., 1986, էջ 616, նաև Ист. Энциклопедия, т. 14, стр. 971.
[11] Архив внешней политики России (далее - АВПР РФ), ф. 129, оп. 29, д. 41, л. 72.
[12] Փիլիսոփայական բառարան, Եր., 1975, էջ 169:
[13] 1915թ. Հայոց ցեղասպանությունը (հոդվածների ժողովածու), Ռ. Սաֆրաստյանի խմբ., Եր., 1995, էջ 98:
[14] История фашизма в Западной Европе, М., 1978, стр. 149.
[15] «Հայք», 4 նոյեմբերի 1997թ. (արտատպվել է «Իզվեստիա» թերթի 1997թ. հոկտեմբերի 30-ի համարից):
[16] Петросян Ю. А. Турецкая публицистика эпохи реформ в Османской империи (конец XVIII – начало XX в.), стр. 19.
[17] Կիրակոսյան Ջ. Ս. Թուրքական դիվանագիտությունը և Հայաստանը, Եր., 1978թ., էջ 61:
[18] Надеин-Раевский А. Пантюркизм: миф или реальность, М., 1995, стр. 6.
[19] Տե՛ս Ռ. Սաֆրաստյանի խմբ. նշվ. ժողովածուն, էջ 44:
[20] Ллойд Джордж. Правда о мирных договорах, М., 1957, т. I, стр. 32.
[21] Ключников Ю. В. и Саванин А., там же, стр. 182, 184, 191, 219, 226-230.
[22] Барсегов Ю. Г. Геноцид армян, Ер., 1990, стр. 24.
[23] Միջազգային պայմանագրերի ժողովածու, Նյու Յորք և Ժնև, էջ 165-172:
[24] Արարյան Ի. Ցեղասպանությունը և դրա պատժելիությունը, Եր., 1996, էջ 52:
[25] Տե՛ս Ռ. Սաֆրաստյանի խմբ. նշվ. ժողովածուն, էջ 93:
[26] АВП РФ, ф. 129, նույն տեղում:

Резюме

Геноцид и международное право.

Норик Саргсян

В статье исследованы проблемы фашизма, геноцида, Восточного и Армянского вопросов. Выявлены причинно-следственные связи возникновения этих проблем, даны новые научные определения. Для всестороннего овследования указанных провлем, представлена краткая политико-правовая характеристика 19-го века. В кратце дано развитие международного права с Венского конгресса (1815г.) до создания ООН (1945г.). Сделан анализ конвенции "Предупреждение преступления геноцида и наказание за него" от 09.12.48г.

Предлагаются изменения в конвенции и привлечение к ответственности правоприемника преступного государства Турции.

Summary

The Genocide and International Law.

Norick Sargsyan

The following important questions have been taken into research in the present article: fascism, genocide, the Eastern and Armenian questions. The cause-effect relations of the foundation of these main questions have been explained, their new scientific definitions have been given. To study the above questions more entirely the political and law characterization of the 19th century has been represented. Much importance concerning the subject-matter of the problem has been given to the brief summary of the developing process of the international law from the Congress in Vienna in 1815 up to the foundation of the UNO in 1945. The convention about "The averting and punishment of the genocide crime" has been studied.

Suggestions have been given to re-discuss the convention and to put responsibility on the lawful follower state, i.e. Turkey.